կառակ, Հայ-կաթօլիկները և Հայ-բողոքականները ոչ թէ տեսուչներ և ուսուցիչներ, այլ և ուսումնարանների հիմնարկութիւններ չունեն:

Ուրեմն, ազգային կրթութիւնը, իր կատարեալ նշանակութեամբ դեռ մեր մէջ ճանաչված չէ: Ընդարձակ Նիրակայ գաւառում, ուր տասն և երկու մեծ գիւղեր կան կաթօլիկ գերդաստաններով, նրանց մէջ ո՛չ մի ուսումնարան չը կայ: Լօռի գաւառում որտեղ կան հինգ մեծ գիւղեր կաթօլիկ գերդաստաններով, միայն մէկը՝ Շահնազար գիւղը ունի մի փոքրիկ գիւղային դպրոց: Ախալքալաքի և Ախալցխայի գաւառներում, որտեղ մտաւոր զարգացումն աւելի լաւ է, իսկապէս ոչինչ ուսումնարանների հիմնարկութիւն չունեն: Դրանից պարզ երևում է, որ Հայ-կաթօլիկները բոլորովին անջատված լինելով ազգի մեծամասնութիւնից, ոչինչ բարոյական կապ չունեն նրա հետ և չեն պահպանում մտաւոր զարգացման հաւասարակշռութիւն իրանց լուսաւորչական եղբայրների հետ: Ինչ կը նշանակէ այն բարձրաձայն ճառախօսութիւնները և այն բարձր ոգևորութիւնները, երբ ազգը մտաւոր և բարոյական կապ չունի իր անջատված անդամների մէջ: Գուցէ մեզանից շատերը համոզված են, որ հայ ազգը այսօր ընթանում է դէպի յառաջդիմութիւն, դէպի լուսաւորութիւն: Բայց ո՛չ ոք ուշադրութիւն չէ դարձնում ազգի այն մարմնի վրա, որը կոչվում է կաթօլիկ հայ: Ոչ ոք չէ մտածում, թէ Կովկասում և Անդրկովկասում ո՞րքան թւով են ապրում, ո՞րտեղ ունեն դպրոցներ, և այլն: Կարծես՝ հայ ասելով պէտք է հասկանալ միայն հայ—լուսաւորչական մասը: Այժմ, ազգային տեսակէտից և շահից նայելով, անհրաժեշտ է, որ հայ—լուսաւորչական մասը հետաքրքրվի իր եղբայր կաթօլիկ հայի կեանքով: Հայ-լուսաւորչականները, որպէս ազգի մեծամասնութիւն, և որպէս աւելի զարգացած մասը, պէտք է այսօր օգնեն Հայ-կաթօլիկ մանուկների կրթութեան գործին, ընդունելով նրանց իրանց ուսումնարանների մէջ, արծարծելով նրանց մէջ ազգային միութեան գաղափարը և, ի հարկէ, չը դիպչելով նրանց կրօնական համոզմունքներին:

Եթէ ո՛չ կրօնական առանձնութիւն պահելով, անհաշտ թշնամական յարաբերութիւն պահելով և ազգային խոցը աւելի բաժանելով, մեր ազգը երբէք չէ կարող հասնել իր ցանկացած ապագային: Այդ գործին պէտք է նպաստեն և այդ մասին պէտք է մտածեն և աշխատեն մեր թեմական տեսուչները, և հոգևորական դասը, որովհետև ազգային մտաւոր զարգացման ղեկը ունեն իրանց ձեռքում:

Հայ-Կաթօլիկ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Անցեալ օրերը պարոն Կարապետ Տիգրանեանցը յանձնեց ինձ մի հարիւր րուբլի յօգուտ Վանայ, սովելոց 'ի յիշատակ իր նոր վախճանած ամուսնոյն: Ուղարկելով ձեզ յիշեալ գումարը հասուցանելու ըստ պատկանելոյն, խնդրեմ բարեհաճէք այս երկտողը զետեղելու ձեր պատուական լրագրի յառաջիկայ համարներից մէկում 'ի գիտութիւն հասարակութեան և 'ի միամտութիւն նուիրատուին:

Արիստղոմ Յովհաննիսեանց

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Յուլիսի 2-ին

Մեր կողմերի քահանաներից մի քանիսի վարմունքի և կեանքի եղանակի վրա համառօտ տեղեկութիւն եմ ուզում հաղորդել ձեզ:

Նախիջեւան քաղաքից դէպի արևելա-հարաւ 2 վերստաչափ հեռաւորութեամբ Նարմէյ գիւղի Ս. քահանան, դեռ մի քանի տարի սրանից առաջ կինը վախճանելով ամիսներ չանցած—ապօրինի մի կին է բերել, պահում է և արդէն ունի զաւակ նրանից:

Նախիջեւանից դէպի արևելք երկու ժամաչափ ճանապարհ գնալով, կը հասնէք Ուզուն-Օբայ անունով մի գիւղի, նոյնտեղի Մ. քահանան քանի տարի սրանից առաջ կինը վախճանելով, ապօրինի կին էր պահում,—այս կինը վախճանվեց, երրորդը առաւ:

Նախիջեւանի գաւառում համարեա հին ժամանակից չը կար այս սովորութիւնը, որովհետև քահանաները աւելի հաստատ և հաւատարիմ էին իրանց կոչմանը և պաշտօնին և մեծ պատկառանքով կը վարվէին ժողովրդի հետ:—Այս սովորութեան սկիզբն դրեց այս գաւառում յիշեալ Մ. քահանան, որի արարմանց արգելող չը լինելով, համարձակութիւն և սովորութիւն եղաւ այլի քահանայի համար: Այս գիւղից 3 ժամ ճանապարհ գնալով՝ կը հանդիպէք մի գիւղի Առինջ անունով, տեղացի Ա. քահանայի կինը անցեալ տարի վախճանվելով, 5 ամիս չանցած քահանան բերեց նոյնպէս մի կին և պահում է: Այս օրերիս նա էլ զաւակ կունենայ: Ի հարկէ մի կողմանէ այս տեսակ կեանքի եղանակը օգուտ է մարդկային ազգի աճման համար:

Չեմ յիշում և Վայոց-Ձոր գաւառակի քահանաներին. այնտեղ էլ կան 2—3 քահանայք այս կերպ ապրող:

Սիսական գաւառի Ամէլու գիւղի Մկրտիչ քահանան, որը իր անկարգ վարվողութեան պատճառաւ քանիցս անգամ հոգևոր իշխանութեան անօրէնութեամբ պատժի է ենթարկվել և յանդիմանութիւն կրել:

Չը նայելով այս ամենին, անցեալ ամիսներին նոյն քահանան Նախիջեւանից յաջորդի թոյլտուութեամբ գնաց Մեծոփ գիւղի աւերակ վանքում վանահայրութիւն անելու: Մի ամսաչափ մնալով այնտեղ՝ ընկաւ գիւղերը ժողովարարութիւն անելու վանքի նորոգութեան համար. գիւղացիք, որոնք տարին մէկ անգամ մեծ բազմութեամբ կը ժողովվէն այս վանքում ուխտագրութեան համար և մեծ համարումն ունեն դէպի այս վանքը, չը խնայեցին իրանց կամաւոր նուէրը:

Յիշեալ Մեծոփ գիւղում մէկ երիտասարդ սիրահարվելով իր դրացի և արինակից մի օրիորդի վրա, շատ աշխատել է ամուսնանալ չէ յաջողվել, հոգևոր իշխանութիւնը չէ թոյլատրել. մինչև անգամ գործը հասել է էջմիածնի Սինօդին, բայց հնարք չէ եղել պսակվել եկեղեցական կանոնաց համաձայն:

Մի գիշեր այս կարծեցեալ վանահօր խորհրդով և համաձայնութեամբ (կարծիք չը կայ որ նա պաշտպան է ունեցել) փեսայացուին և հարսնացուին տանում են վանքը. վանահայրը սեամօրուք լինելով, ալուր է քսել մօրուքին—սպիտակացրել, որպէս զի տեսնող մարդիկ և նոյն իսկ ամուսնացողները, եթէ հարկը ստիպի նրանց հարցնելու լինեն, վկայեն որ պսակողը եղել է մի ծերունի քահանայ և ոչ թէ վանահայրը, որովհետև սա նախագուշակել է որ գործը կը յայտնվի և քննութիւն կը լինի իր մասին, ուստի այս հնարքն է գործ դրել, իրան ազատ կացուցանելու համար:

Վերջապէս բանը բացվեցաւ և վանահայրը անյայտացաւ, թէ ուր, յայտնի չեղաւ. մի ժամանակ անցնելուց յետոյ, անցեալ ամիս լսվեցաւ, որ նա Սիսիանում էլ է արել այսպիսի չըհաս պըսակներ: Ահա այսպիսի բաներ են լինում այս կողմերում:

Մ. Ս. Ն.

ՆԱՄԱԿ ՀԱՄԱՄԼՈՒԻՑ

—

Յունիսի 25-ին

Լսելով մեր ուսուցչից, որ Հայաստանում սով կայ, մենք դպրոցի աշակերտներս հանգանակեցինք 40 րուբլ և ուղարկում ենք ձեզ, որ դուք հասցնէք ուր հարկն է: Ահա մեր անունները: Յովհաննէս և Կարապետ Թորոսեանց 1 ր., Արամ և Գրիգոր Տէր Յովսէփեանց 1 ր., Մկրտիչ և Տիգրան Ղամարեանց 1 ր., Սարիբեգ Տէր Մկրտիչեանց 15 կ., Աղքանազ և Սիսակ Տէր-Սիմէօնեանց 1 ր., Տիգրան Գաբրիէլեանց 50 կ., Հայկ և Յօլակ Տէր-Սիմէօնեանց 70 կ., Մնացական Մանուկեանց 20 կ., Գրիգոր Գէորգեանց 20 կ., Նիկողայոս Վարդանեանց 40 կ., Բարսամ և Հայկ Դարչինեանց 1 ր., Արամ Ջօրանեանց 40 կ., Արշակ Ջօրանեանց 30 կ., Մարտիրոս Ղալէչեանց 20 կ., Բագրատ և Տիգրան Դիլբարեանց 60 կ., Արշակ Տէր-Յարութիւնեանց 20 կ., Գեղամ Տէր-Պետրոսեանց 40 կ., Սողոմոն Նաւասարդեանց 10 կ., Խաչատուր և Մարտիրոս Օհանեանց 50 կ., Մատթէոս Տէր-Յովսէփեանց 30 կ., Նիկողայոս Լամբարեանց 20 կ., Արսէն Ստեփաննեանց 30 կ., Վաղարշակ Միքայէլեանց 30 կ., Գէորգ Դարչինեանց 3 ր., Եղիա Լամբարեանց 1 ր., Յարութիւն Լամբարեանց 1 ր., Գէորգ Լամբարեանց 1 ր., Մկրտիչ աւագ քահանայ Տէր-Կարապետեանց 1 ր., Մինաս Ջօրանեանց 1 ր., Յովհաննէս Ջօրանեանց 1 ր., Մկրտիչ Տէր-Վարդանեանց 1 ր., Եզեկիէլ Յովսեանց 1 ր., Փիլիպպոս Վարդանեանց 1 ր., Գալուստ Լամբարեանց 40 կ., Մանաս Դանիէլեանց 40 կ., Զաքար Անդրէանց 80 կ., Յովսէփ քահանայ Տէր-Յովսէփեանց 1 ր., Դանիէլ Տէր Յովսէփեանց 1 ր., Թորոս Այվազեան 20 կ., Լէոնիբար Գէորգեանց 20 կ., Ասատուր Ջօրանեանց 50 կ., Պապ Շահվերդեանց 1 ր., Ղուկաս Թումանեանց 1 ր., Ադամ Յովսէփեանց 1 ր., Գալուստ Աբրահամեանց 25 կ., Սիմէօն Աջամեանց 50 կ., Մկրտիչ Ստեփանեանց 50 կ., Խաչատուր Ղազարեանց 40 կ., Թագուհի Դարչինեանց 1 ր., Թէկլէ Լամբարեանց 1 ր., Զառլու Լամբարեանց 1 ր., Եղիսաբէթ Տէր-Սիմէօնեանց 1 ր., Շողեր Թորոսեանց 1 ր., Աննա Տէր-Յովսէփեանց 60 կ., Թէկլու Լամբարեանց 50 կ., Զաւահիր Տէր-Յովսէփեանց 20 կ., Մալազ Լամբարեանց 20 կ., օր. Նատալիա Լամբարեանց 20 կ., օր. Սոֆիա Լամբարեանց 20 կ., Ուս. Նիկողայոս Լամբարեանց 1 ր., փոստի ծախսը ինձնից, ընդամենը 40 ր:

Նիկողայոս Վայիլեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 11-ին յուլիսի

Կարդալով ազգօգուտ «Մշակ» լրագրի № մէջ հրաւէրը յօգուտ Հայաստանի սովատանջների և իմ միակ որդուս Մանիայի ծննդեան տօնի պատճառաւ ուղարկում եմ սրա հետ իմ չնչին նուէրս՝ երեք րուբլի, յօգուտ Հայաստանի սովելոց, ևս իմ բարեկամ Յ. Տէր-Յ.-ի տուած նուէրը մէկ րուբլի մի և նոյն նպատակի, ընդամենը չորս րուբլի, խնդրեմ հասուցանէք ուր հարկն է:—Աւելացնում եմ սորան, որ ևս 'ի մեծի պահոցն սուրբ ճաշակման ժամանակ նուիրել եմ, ինչպէս և շատերը, մի և նոյն նպատակին փոքր գումար, որի համար մինչև այսօր ոչ մի լրագրի միջոցաւ հաշիւ չեն տալի և մտածում էլ չեն տալու նուէր ժողովող հոգևորականները, և երևի յարգելի հայրերը կամ նրանց մեծն (որը ուղղակի հանդիսանում է տեղային կօնսիստորիան) «փառք 'ի բարձունս» ասելով, կուլ են տուել, որ զլանում են գրաւոր հաշիւ տալուց, և եթէ այսպէս չէ, թող պատասխանեն «Մշակի» կամ որ և է լրագրի միջոցաւ, թէ ինչ են արած յիշեալ նուէրները 'ի միամտութիւն հասարակութեան, որը այս հասարակութիւնը, իմանալով իր տուած գումարի հաշիւը, միւս անգամ ևս ուրախութեամբ ձգի իր լուման ազգի գանձարանը:

Ե. Ա. Օծ-ցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բագու, 5 յուլիսի

«Մշակի» 105 համարում Բագուայ երկսեռ դպրոցների տեսուչ պ. Բ. Ստեփանեանը իր նամակում ի միջի այլոց ասում է, որ ես հրաժարվել եմ ռուսաց լեզուի և թուաբանութեան դասախօսութիւնից յիշեալ դպրոցներում «պատճառ բերելով, թէ անցեալ տարի ընկերութեան հոգաբարձուները մի քանի օր մնացած արձակուրդին հեռացրին նորան իր պաշտօնից առ 'ի զրկելոյ արձակուրդի հասանելի ռոճիկից»:

Սա բոլորովին սխալ է, որովհետև գուցէ թէ ընկերութեան հոգաբարձուները չը գիտեն իմ հրաժարվելու պատճառը, բայց նա յայտնի է պ. Ստեփանեանցին, ըստ որում ինքն է եղել ինձ առաջարկողը, և ես այսօր բոլորովին զարմացած եմ, թէ ինչպէս նա, անցքին հաւաստի տեղեակ լինելով, ստեղծել է այդ տեսակ սխալ պատճառ իմ հրաժարման մասին:

Պ. Ստեփանեանցի ասելուց հետևում է, որ ես վիրաւորված լինելով ընկերութեան հոգաբարձուների անկանոն վճռից, զրկել եմ ազգային ուսումնարանը այն մասնաւոր և գուցէ չնչին օգտից, որ ես կարող էի տալ նորան, դասախօսութիւն անելով նորա մէջ.

Այդ մեծ զրպարտութիւն է պ. Ստեփանեանցի կողմից: Ճշմարիտ է ընկերութեան հոգաբարձութիւնը ինձ հետ վատ վարվեց, բայց սորա մասին երբէք չեմ համարձակվի մնասել ուսումնարանին, վրէժխնդիր լինել նորան, դասախօսութիւն չանելով նորա մէջ: Ես հաւատացած եմ, որ պ. Ստեփանեանցը չի գլանայ «Մշակի» մէջ իմ բողոքը կարդալուց յետ, սուտը հերքելու համար յետ վեր առնել իր խօսքերը ինձ վերաբերեալ և կը համաձայնի ինձ հետ, թէ իմ հրաժարման պատճառը, ինչպէս իրան ես յայտնի է, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ իմ մասնաւոր տարրական դպրոցը, որ բացել էի անցեալ տարի նոյեմբեր ամսին և որին զոհում էի իմ բոլոր ազատ ժամերս, դասախօսելով այնտեղ:

Ցանկանում եմ ստուգել միայն այդ հարցը, իսկ միւս հարցերի պատասխանը թողնում եմ պ. Մովսէսեանին, որոնց նոյնպէս անկանոն և սխալ բացատրութիւն է տուել պ. Բ. Ստեփանեանցը:

Իսկ ինչ կը վերաբերի ինձ, կարող եմ ասել, թէ որքան էլ անբաւական լինեմ ընկերութեան հոգաբարձուներից, այսու ամենայնիւ միշտ պատրաստ եմ ծառայել ազգային ուսումնարաններում, որքան ժամանակս թոյլ է տալիս:

Բագուի ռէալական ուսումնարանի ուսուցիչ Մ. Պոպովեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ալէքսանդրապօլ, 7 յուլիսի

Կարդալով «Մեղուի» 48 համարում իմ հրատարակած Անիի աւերակների պատկերի մասին յարգելի խմբագրութեան այն նկատողութիւնները թէ «որքան մեզ յաջողվեցաւ տեսնել մեծ. պ. Ֆիւրքճեանի մօտ նոյն աւերակների լուսանկար պատկերները և համեմատել—վերոյիշեալ պատկերի նկարների մէջ շատ անճշտութիւնք կան» և թէ «Բագրատունեաց պալատի մայր եկեղեցու նկարների մէջ անճշտութիւնքը յոյժ աչքի ընկնելու են»: Հրաւիրում եմ «Մեղուի» ուշադրութիւնը համեմատել մեր «Բագրատունեաց պալատի» նկարը պ. Ֆիւրքճեանի «Պահլաւունեաց պալատ» անունով լուսանկարի հետ, որովհետև այդ (պալատ Բագրատունեաց) սխալմունքը եղած է վիմագրութեան կողմից. մենք, իրօք, նախ Բագրատունեաց անուանեցինք հիմնվելով Գրիգոր Պահլաւունու որդի, Ապլխարիպ հայոց մարզպանի յիշատակարանի վրա, որ դրօշմված է իր հիմնարկված «փրկիչ» եկեղեցու ճակատին, որ 'ի միջի այլոց՝ մութ կերպով յիշում է թէ՝ «զպալատանսդ մեր զօր շինեալ է առ սուրբ փրկչիս», ուրեմն եթէ փրկիչ եկեղեցու հանդէպ եղած էր Պահլաւունեաց տունը, անշուշտ մեր նկարած պալատը պէտք էր Բագրատունեաց կարծել: Մի քանի հիմնաւոր գրութիւններին հետևելով գրեցինք Մոսկվա, որ «Պահլաւունեաց» անունով վիմագրվի, բայց արդէն ուշ էր և մեր պատկերները, թերևս, մամուլի յանձնված էին. իսկ Բագրատունեաց պալատ պ. Ֆիւրքճեանը անուանում է Առաքելոց եկեղեցին, որը արտաքուստ սրբատաշ քարերից ու ճարտարարուեստ քանդակներից մերկացած, աւերված և հողի ու քարի կոյտերի մէջ կիսով չափ ծածկված լինելու առթիւ, մեր պատկերի մէջ մտցնելու անյարմար համարեցինք:

Մայր եկեղեցու նկարի մէջ գուցէ լինէին շատ աննշան անճշտութիւնք, 'ի հարկէ, ոչ լուսանկարի նրբութեամբ, բայց ոչ էլ «յոյժ աչքի ընկնող»:

Եթէ 1850 թւերում տեսած լինէր «Մեղուի» խմբագիրը Անիի աւերակները, և կամ պ. Ֆիւրքճեանի լուսանկարները այն թւերից մնացած լինէին՝ անկասկած, պէտք է համոզվէր «Մեղուն», որ մեր պատկերը բնաւ ճշտութիւնից զուրկ չէ, որովհետև դեռ 1873 թւին, մեր աշխատութեան ժամանակ, հ. Աղէքսանդր վարդապետ Արարատեանի առաջարկութեամբ ցանկալով, որ Անին փոքր ինչ նոր ձևով լինի նկարված, մենք 'ի նըկատի ունեցանք նրա մօտ գտնված գերմանացի կեստների մի ձեռանկար պատկերը 1850—1851 թւերին նկարված:

Բոլոր այն շինութիւնքը՝ որ զուրկ են կենդանի վկայութիւններից—չունեն արձանագրութիւն, մենք հիմնվելով մի քանի ճանապարհորդաց կարծիքների վրա, զանազան անուններ տուեցինք. ինչպէս օրինակ՝ «Միջնաբերդի զօրանոցը» դորան շատերը «տուն Բագրատունեաց» կանուանեն: «Սուրբ Գէորգի և սուրբ Սարգսի մատուռներին» գրեթէ բոլոր այցելուները մութ կերպով «երկու մատուռներ» միայն կասեն, բայց մենք աչքի առաջ ունենալով դարերից մնացած ժողովրդական աւանդութիւնները, այդպէս անուանեցինք, նոյնը արեցինք նաև «Սուրբ Հռիփսիմէի» հետ, որին ոմանք արքունական եկեղեցի են անուանում.

Հայր Ալիշանեանցի «մեծ մզկիթ» անուանած շինութիւնը, մենք «կաթողիկոսարան» կոչեցինք, հա-